



**ԱՊԱՐԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ**

Հասցե. ՀՀ Արագածոտնի մարզ 3103,
Ք.Ապարան, Բաղրամյան 26
Հեռ./Ֆաքս +/ 0252/ 6 23 60
Էլ.փոստ
aarhusaparan@mail.ru

ՀՀ Արագածոտնի մարզի Մելիքցյուղի
համայնքապետ Հակոբ Մկրտչյանին

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝
Նատալյա Մանուկյանից

08.06.15թ.

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Մկրտչյան.

Օրերս Ապարանի Օրհուս կենտրոնը, բնապահպանական մի շարք ՀԿ-ներ և փորձագետներ ահագանգ են ստացել Մելիքցյուղի Թուխմանուկի ոսկու հանքավայրում իրականացվող ինտենսիվ շինարարական աշխատանքների փաստի վերաբերյալ:

Ինչպես գիտեք, < Մեզո Գոլդ> ՄՊԸ-ն կողմից ներկայացված «Թուխմանուկի ոսկու (կենտրոնական տեղամաս) հանքավայրի շահագործման, փոփոխված աշխատանքային նախագծի վերաբերյալ առկա է ՇՄԱԳ փորձաքննության 11.12.2014 թ., թիվ ԲՓ 93 ԲԱՑԱՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, որտեղ որպես հիմնավորում լիարժեք և հանգամանալից բերված են ոչ միայն Մելիքցյուղ համայնքին, այլև Հանքավանի ջրաբանական արգելավայրին սպասվող վտանգները:

Հավելենք նաև, որ < Մեզո Գոլդ> ընկերության իրավունքները ըստ պետական լիազոր մարմինների հետ ունեցած պայմանագրի և հանքարդյունահանման իրավական փաստաթղթերի փաթեթի սպառված են 2015թ-ի հունվարից և պետք է դադարեցված համարվեին:

Ելնելով վերը նշվածից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը և հավաստի տեղեկատվության տրամադրումը՝ խնդրում եմ Ձեզ Ապարանի Օրհուս կենտրոնին տրամադրել մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

1. իրականացվում են արդյո՞ք շինարարական աշխատանքներ հանքավայրի տարածքում, և եթե այո,
2. ում կողմից են դրանք իրագործվում և ո՞րն է կատարվող աշխատանքների նպատակ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/): Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող

Նատալյա Մանուկյան

